ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 24 >> << Օգոստոս >> 2020թ. N ՄՊ/361-2020

Ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով, 54-րդ հոդվածի 3-րդ մասով, 244.9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 299-րդ հոդվածով, 305-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերով, <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 20-ի N06-13-8 որոշումը և 2020 թվականի հուլիսի 21-ի N ՔՏՄ/13.2/8311-20 գրությամբ ներկայացված հողերի օգտագործման և պահպանման խախտումների վերաբերյալ 2020 թվականի հուլիսի 14-ի N07 ակտը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝
   1) հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով՝ մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված տուգանքը վճարել տասնհինգօրյա ժամկետում պետական բյուջեի ՀՀ ՔՏՀԱՏՄ 900005001517 հաշվեհամարին և մուծման անդորրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին (Դ. Մինասյան)՝ միջոցներ ձեռնարկել հայտնաբերված խախտումները վերացնելու՝ հողամասերի օգտագործման նպատակային նշանակությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխելու ուղղությամբ:
4. Սույն որոշման կատարման ընդհանուր հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյանին, իսկ որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետի փոխարինող Ս. Սարգսյանին:
5. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 73-րդ հոդվածով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին իրազեկելու հաջորդող օրվանից կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի պաշտոնական ինտերնատային կայքէջում հրապարակելու միջոցով:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 24.08.2020 16:01:51 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230